

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՇՈՒԷԴ ԾԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՖՐԵԴՐԻԷ ՀԱՍԵԼՔՈՒՍԹԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՐՇՈՒԻ ԲԱՆԶԻՆԵԱՆ
mala@freenet.am

1757ին Ստոկհոլմում Շուէդիայի թագուհի Լովիսա Ուլրիքայի (Lovisa Ulrika, 1720-1782) նախաձեռնութեամբ լոյս է տեսել *Iter Palaestimum Eller Resa Til Helige Landet, Förrättad Ifrån år 1749 Til 1752, Med Beskrifningar, Rön, Anmärkningar, öfver De Märkvärdigaste Naturalier* (Iter Palaestinum կամ Ճանապարհորդութիւն Սուրբ Երկիր 1749-1752 թուականներին, Նկարագրութեամբ Հանդերձ) գիրքը, որի հեղինակն էր շուէդ վաղամեռիկ ճանապարհորդ, բուսարան եւ բժիշկ Ֆրեդրիք Հասելքուիսթը (Fredrick Hasselquist, 1722-1752)¹։ Ընդամէնը երեսուն տարի ապրած այդ բազմաշնորհ երիտասարդը սերունդներին է թողել հետաքրքիր մի ուղեգրութիւն՝ Արեւելք կատարած իր ճանապարհորդութեան վերաբերեալ, որտեղ ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդել նաեւ հայ ժողովրդի մասին։

Մեր հաշումներով՝ Հասելքուիսթը չորրորդ շուէդ ճանապարհորդն է, որ եղել է Արեւելքում եւ չփուել հայերի հետ։ Նրա նախորդներն էին Բենգթ Բենգսթոն Օքսենսթիերնան (1591-1643), Նիլս Մաթսոն Շիոփինգը (ճանապարհորդել է 1654-1656ին) եւ Ուփսալայի Համալսարանի Արեւելագիտութեան Բաժանմունքի ուսուցչապետ Միքայէլ Օլոֆսոն Էնեմանը (1676-1714)²։ Վերջինս 1711-1712ին ճանապարհորդել է Փոքր Ասիայում եւ Եգիպտոսում։ Նրանից մի քանի տասնամեակ անց, 1749-1752ին, նոյն ուղերթը կրկնել է Ֆրեդրիք Հասելքուիսթը³։

Հասելքուիսթի *Iter Palaestimum* գրքի առաջաբանը գրել է բուսարանի ուսուցիչը՝ շուէդ ականաւոր կենսաբան Կարլ Լինէյը (Carl von Linné, լատինական ձեւով՝ Charles Linnæus, 1707-1778), որտեղ նա մանրամասներ է հաղորդել իր վաղամեռիկ ուսանողի կեանքի եւ գործունէութեան վերաբերեալ։ Հասելքուիսթը ծնուել է 1722 Յունուարի 3ին, Թորնվալայում (Արեւելեան Գոթիա), կարգաթող քահանայ Անդերս Հասելքուիսթի ընտանիքում։ Հայրը վախճանուել է երբ որդին ղեռեւս փոքր էր, իսկ մայրը՝ Մարիա Հելենա Փոնթինը (Pontin), եղել է մտային հիւանդ։ Ֆրեդրիքի կրթութեամբ զբաղուել է մօրեղբայրը՝ եկեղեցու հովիւ Փոնթէնը, որը նրան կրթութեան է տուել Լինչէօփինգի

դպրոցում: Յետագայում իր ուսման ծախսը Ֆրեդրիքը հոգացել է անձամբ՝ կրտսեր տարիքի աշակերտներին անհատական դասեր տալով:

1741ին Հասելքուխթն ընդունուել է Ուփսալայի Համալսարան, սովորել բժշկութիւն եւ կենսաբանութիւն: Գրել է նաեւ բանաստեղծութիւններ: 1746ին արժանացել է թագաւորական կրթաթոշակի: Գիտութեան հանդէպ Հասելքուխթի ունեցած օգտուածութեան «Առաջին ապացոյցը եղաւ նրա «Բոյսերի Արժանիքները» գիտաթեզը, որը նա լաւ էր գրել եւ պաշտպանեց տքնաջանօրէն...», — վկայել է Լինէյը⁴: Ի դէպ, վերջինս է Ֆրեդրիքի մէջ հետաքրքրութիւն առաջացրել արեւելեան երկրների, յատկապէս Պաղեստինի նկատմամբ, ասելով, որ այնտեղի բուսական աշխարհը մնացել է լիովին չուսումնասիրուած: Հասելքուխթը վճռել է դառնալ այդ երկրի բուսաշխարհի առաջին հետազօտողը եւ լրջօրէն պատրաստուել է ճանապարհորդութեան, գումարներ է հայթայթել իր ուղեւորութեան համար, սովորել արարերէն եւ այլ արեւելեան լեզուներ⁵: Անգամ թոյլ թոքեր ունենալու հանգամանքը նրան ետ չի կանգնեցրել իր որոշումից. նա համոզուած է եղել, որ կլիմայի փոփոխութիւնը դրական ազդեցութիւն կ'ունենայ առողջութեան վրայ:

1749ի ամռանը Հասելքուխթը բուսաբանութեան վերաբերեալ դասախօսութիւններ է կարդացել Ստոկհոլմում: Լեւանտական Առեւտրի ընկերութիւնը նրան իրաւունք է տուել անվճար մեկնել մինչեւ Ջմիւռնիա այդ ընկերութեանը պատկանող նաւով: Հասելքուխթը ճանապարհ է ընկել նոյն թուականի Օգոստոսի 7ին: Նոյեմբերի 28ին հասել է Ջմիւռնիա, որտեղ մնացել է ամբողջ ձմեռ: 1750ի Մայիսին նա հասել է Եգիպտոս. այնտեղ մնացել է մօտ մէկ տարի, ուսումնասիրել բուրգերը, Նեղոսի հովիտը: Այստեղից թղթակցութիւններ է ուղարկել Ստոկհոլմ, որոնք տեղի մամուլում տպագրուել են «Գրական Նորութիւններ» վերնագրով: Շուէդիայում նա յարուցել է բոլորի հիացմունքը, Ուփսալայի եւ Ստոկհոլմի Թագաւորական Ակադեմիաները նրան ընտրել են իրենց ընկերութիւնների անդամ:

Հասելքուխթը 1751ի Մարտին Գահիրէից ուղեւորուել է Պաղեստին, եղել Երուսաղէմում, Հալֆայում եւ այլուր⁶: Այնուհետեւ երիտասարդ շուէդ բուսաբանը Կիպրոսի եւ Հռոդոսի վրայով հասել է Ջմիւռնիա՝ արեւելեան տարրեր բուսատեսականերով ծանրաբեռնուած եւ Շուէդիա վերադառնալու նպատակով: Նա մտադիր է եղել հայրենիք հասնելուն պէս հաստատուել գիւղում եւ կաթնային սննդակարգով վերականգնել առողջութիւնը: Սակայն առողջական վիճակը գնալով վատթարացել է, եւ թոքախտից հիւծուած, նա մահացել է 1752ի Փետրուարի 9ին, Ջմիւռնիայում⁷: Մահից յետոյ նա թողել է 14.000 թալէր պարտք, ինչպէս նաեւ չորացրած բոյսերի, Նեղոսից բռնած ձկների, օձերի, միջատների, արարական ձեռագրերի, եգիպտական մումիաների մի մեծ հաւաքածու, որի մի մասն է միայն հնարաւոր լինում փրկել: Գնահատելով վաղամեռիկ հայրենակցի անձնուիրութիւնը՝ Շուէդիայի Թագուհի Ուլրիքան մարել է Հասելքուխթի բոլոր պարտքերը, եւ նրա Զանքերով գիտնականի արժէքաւոր հաւաքածուի փրկուած մասը եւ արխիւը Ջմիւռնիայից հասցուել է Շուէդիա:

Այժմ Հասելքուիսթի հաւաքածոները պահոււմ են Ուփսալայի էվոլյուցիայի Թանգարանում (Evolutionsmuseet) եւ Ստոկհոլմի Թագաւորական Թանգարանում եւ Բերգիուսի Բուսարանում (Bergius Herbariet):

Ուլլրիքա Թագուհին է գրադուել նաեւ Հասելքուիսթի ձեռագրերի հրատարակութեան խնդրով: Բուսարանի մահից հինգ տարի յետոյ Լինէյի խմբագրութեամբ լոյս են տեսնում նրա ճամփորդական նոթերը: Այս փաստաշատ, միաժամանակ աշխոյժ ոճով գրուած գիրքը մեծ ընդունելութեան է արժանացել, Թարգմանարար լոյս տեսել Լոնդոնում, անգլերէն⁸: Գիրքը լոյս է տեսել նաեւ՝ գերմաներէն, ֆրանսերէն եւ հոլանդերէն:

Գիրքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասն ուղեւորութեան նկարագրութիւնն է, որ աւարտուում է 1751ի Յուլիսով: Երկրորդ մասում (գրուած մեծ մասամբ լատիներէն), մանրամասն տեղեկութիւններ են տրուում հեղինակի տեսած զանազան բոյսերի, կենդանիների, դեղամիջոցների եւ բժշկական փորձերի վերաբերեալ: Գրքի երրորդ մասը Հասելքուիսթի նամակներն են՝ ուղղուած իր ուսուցիչ Լինէյին, ինչպէս նաեւ ճանապարհորդութեան ընթացքում նրա ուսումնասիրած քարերի, թռչունների, ձկների, բոյսերի նկարագրութիւններն ու դասակարգումը: Այսօր Հասելքուիսթի արխիւը պահոււմ է Շուէդիայի Ուփսալա քաղաքի համալսարանի գրադարանի (Փարոլինա Ռեդիւ-ւիւա) ձեռագրային բաժնում:

Փրեդրիք Հասելքուիսթը հայերիս համար ուրոյն հետաքրքրութիւն է ներկայացնում այն պատճառով, որ նրա ուղեգրութեան մէջ բազմիցս յիշոււմ են հայն ու հայկականը: Երիտասարդ շուէդն իր ճանապարհորդութեան ընթացքում տարբեր առիթներով չփութել է հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ, (օրինակ, Մագնեզիա քաղաքն է այցելել մի հայ ծառայի ուղեկցութեամբ⁹), հայ եկեղեցում ներկայ է գտնուել Զատկական Ճրագալոյցի պատարագին եւ նկարագրել այն, գնահատել հայ ժողովրդի արժանիքները: Նրա ճամփորդական նոթերը թէեւ սակաւաթիւ, սակայն արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում Զմիւռնիայի, Հայֆայի եւ Երուսաղէմի հայոց վերաբերեալ: Իր ճամփորդութեան ընթացքում սովոր լինելով ամէնուր հանդիպել հայերին առնչուող կառույցների՝ Լիբանանի Սայդա քաղաքի մասին հարկ է համարել նշել, որ այնտեղ «հայերը շուրջն ո՛չ եկեղեցի, ո՛չ տուն»¹⁰:

Ուփսալայի Համալսարանի գրադարանում Հասելքուիսթի արխիւն ուսումնասիրելիս մեր ուշադրութիւնը գրաւեց մի այլոմ, որ պարունակում է ճանապարհորդութեան ընթացքում նրան հանդիպած տարբեր անձնաւորութիւնների ընծայագրեր եւ սրտի խօսքեր՝ առ երիտասարդ շուէդացին: Յունարէն, անգլերէն, ֆրանսերէն, լատիներէն եւ արաբատառ գրութիւնների մէջ առկայ է նաեւ մի ֆրանսերէն-հայերէն գրութիւն, որ դրել է զմիւռնիացի մի հայ՝ Պոլ Զուհրաբ (Պօղոս Զուհրաբեան) անունով. «Si mes yeux Vous on pendu mon cœur vous Voit toujours: Էյթ աչբու իմ քեզ կորուց սիրտն իմ քեզ է միշտ համապագ: a Smirna le 6 may 1750 Paul Zuhreb»¹¹:

Թարգմանարար ներկայացնում ենք Ֆրեդրիք Հասելբուխի Iter Palaestinum գրքի այն հատուածները, որոնցում խօսւում է Հայերի մասին: Թարգմանութեան համար հիմք են հանդիսացել 1757ի շուէդերէն եւ 1766ի անգլերէն հրատարակութիւնները: Սուր փակագծերում տրուած նշումները թարգմանչինն են: Կատարել ենք աննշան կրճատումներ:

ՖՐԵԴՐԻԿ ՀԱՍԵԼԲՈՒԽԻ
ITER PALAESTINUM ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ 1749–1752 ԹԹ.
(հատուածներ)

Յունական եւ հայկական եկեղեցու համար այս շաբաթը տօն է: Նրանք օգտագործում են հին եղանակը, ինչպէս մենք ենք գործածում այստեղ Շուէդիայում¹²:

Հայերը ցուցադրեցին մոյն գործողութիւնը (ռոնլուայի ծէսը - Ա.Բ.) կէսօրին¹³, սակայն դա մնան չէր այն տեսարանին, որ յոյները կատարեցին: Այն խորանի առջեւ իրականացրեց գլխաւոր քահանաներից մէկը (քանի որ նրանք այդտեղ բնակուող եպիսկոպոս չունեն), այլ ուրիշ միաբանութիւնների եպիսկոպոսներին ենթակայ մէկը, որը հիմա եւ յետագայում այցելում է նրանց: Պատարագն առաջինն ընթերցեց մի քահանայ, հագին շուրջառ՝ արծաթ ծիսական անկիւնակապով: Նա նստած էր գորգի վրայ¹⁴, դիմացն արող էր դրոմ, որի վրայ պիտի նստէր նա, ում ոտքերը պէտք է լուան: Վերջինները հերթով տեղ զբաղեցրին արողի վրայ: Առաջինը լուացին տասներկու քահանաների ոտքերը, սակայն խոնարհութիւնն այստեղ շատ աւելի էր, քան յոյների մօտ, քանի որ այստեղ ողջ միաբանութիւնն ունէր այդ արժանիքը, ամենահարուստ վաճառականից մինչեւ ախոռի ամենացածր ծառան, որոնք կազմում են միաբանութեան գլխաւոր տարրը: Քահանաները լուացին եւ չորացրին իրենց ոտքերը՝ դրանք օծելով թարմ խոլով, որը, ինչպէս նրանք ասացին, պատրաստուած է ջահել կոփի առաջին անգամ կթած կաթից: Նա, ում ոտքերը լուացել եւ օծել էին, համբուրում էր քահանայի ձեռքը եւ աշխուժօրէն հեռանում՝ տեղ տալով յաջորդին: Քահանայի երկու կողմում մարդկանց մեծ բազմութիւն էր՝ ծեր եւ երիտասարդ, որոնք երգում էին միեւնոյն տիւրն տոնով, ինչպէս յոյները, սակայն նրանք երգում էին գրական հայերէնով, որը նաեւ գործածում է հասարակական երկրպագութեան ընթացքում եւ որը նոյնքան տարբեր է իրենց խօսած հայերէնից, որքան որ գրական յունարէնն է տարբերում ժամանակակից յունարէնից¹⁵:

Հայերն ունէին մեծ եւ հրաշալի պատարագ ամսի 14ին, Ջատկուայ նախօրէին, որին ես ներկայ գտնուեցի: Խորանից վար գտնուող արողի վրայ մի գրակալ է գետեղուած, որի վրայ դրուած են ատետրանիչների զրքերը՝ գրուած գրական հայերէն, վրան կարմիր եւ ոսկեգոյն կտորի կազմ քաշած: Գրակալի մի կողմում գետեղուած է մի ամրացուած արող, որը զբաղեցնում է գլխաւոր քահանան (որը ղեկավարում է արարողութիւնը՝ եպիսկոպոսի փո-

խարեն)՝ հազած իր սեւ քահանայական զգեստը: Նրա ամեն կողմում մատում է մի-մի քահանայ՝ նոյն կերպ հագնուած: Վեց ամուսնացեալ քահանաներ իրար ետեւից գնում են դէպի գրակալը: Ոմանք կարդում են, իսկ ոմանք՝ գրքից ինչ-որ բան երգում: Նրանց հազին իրենց սեւ քահանայական զգեստն է, եւ երբ նրանք անցնում են իրենց պարտականութիւնների կատարմանը՝ մի գեղեցիկ շուրջառ են գցում իրենց վրայ: Ամբիոնի իւրաքանչիւր կողմում մի քահանայ է կանգնում շուրջառով եւ խոյրով, ձեռքներին մոմեր պահած, իսկ նրանց կողքին կանգնած են սպիտակ ժամաշապիկ հագած եւ խաչեր բռնած տղաներ: Երբ այս շրջանն ամբողջացաւ, տասներկու վայելչատես երիտասարդ տղամարդիկ մտան նոյն տեղը, հագներին՝ մինչեւ գետին հասնող սպիտակ ժամաշապիկ, մէջքի եւ բութի մասերում կարմիր խաչերով զարդարուած: Նրանք գլխաբաց էին, մինչեւ ականջները սափրուած, գլխի գագաթը ճաղատ, ինչպէս Հոռմի վանականներինը: Որքան որ կարողացայ իմանալ՝ նրանցից ոմանք հոգեւոր դասի աշակերտներ են, ոմանք՝ եկեղեցու ընդհանուր սպասաւորներ¹⁶: Նրանք, ովքեր բախտ են ունեցել լինել Երուսաղէմի շրջակայ սուրբ վայրերում՝ ձեռք են բերել «հաջի» անունը: Բոլորն էլ գեղեցկատես եւ բարեկազմ երիտասարդներ էին, եւ թում էր, որ գտնուում են ոչ թէ եպիսկոպոսի, այլ գնդապետի ենթակայութեան ներքոյ: Նրանք, երբ առաջ գնացին, համբուրեցին փոխեպիսկոպոսի ձեռքը, նոյնը կատարեցին վերադարձին: Նրանցից իւրաքանչիւրը կարդաց կամ երգեց ինչ-որ բան գրքից, նոյն եղանակով, ինչ որ նախորդները, եւ նրանց իւրաքանչիւրի երգեցողութեան արանքում քահանաներից մէկը, որ մտած էր յատակին, վեր էր կենում եւ կրկնում որոշ բառեր երեք անգամ: Ես չհասկացայ, թէ դրանք ինչ բառեր են, բայց ինձ ասացին, որ «փառք» է: Նրանց երգն աւարտուեց. նրանցից մէկը, որ արդէն երգել էր, մի քանի աստիճան բարձրացաւ եւ կանգնեց խորանի առջեւ, որ փակուած էր վարագոյրով: Երբ նա միեւնոյն գրքից մի հատուած երգեց, խորանի առջեւ հնչեց երգ եւ գործիքային երաժշտութիւն: Վերջինս կազմուած էր փոքր երկաթեայ սրինգներից (նման մի տեսակ ծնծղաների), որ ազուցուած են իրար, եւ երկու հաստ արոյրէ թերթերից, որոնք ճիշտ ժամանակին իրար են բախում¹⁷: Դա թուրքական երաժշտութիւն է եւ երգի մէջ այնքան էլ վատ չի հնչում¹⁸: Որոշ ժամանակ անց փոքրիկ զանգերի ձայն լսուեց: Երբ երաժշտութիւնը միառժամանակ դադարեց, վարագոյրը, որ թաքցնում էր խորանը, բացուեց: Այնժամ տեսանելի եղաւ ծեր մեծարգոյ քահանան, կանգնած խորանից մի փոքր հեռու, գլխին՝ թանկարժէք քարերով զարդարուած ոսկեգօծ եպիսկոպոսական թագ¹⁹: Նրա երկու կողմում կանգնած էին սեւ հագուստով մէկական քահանայ, որոնք մինչ այդ բեմում էին, ձեռքներին՝ բուրվառ եւ մոմեր: Քահանան սկսեց երգել եւ օրհնաբանել, որին միաբանութիւնը պատասխանում էր երգով եւ երաժշտութեամբ: Մի փոքր անց հաղորդութիւն բերին խորանի առջեւ գտնուող մի փոքր խցից: Այն բերեց վերոյիշեալ աշակերտներից մէկը՝ պահած իր գլխին հաւասար եւ դրեց խորանին: Միեւնոյն ժամանակ եկաւ մէկ ուրիշը, որը քահանայից վերցրեց խոյրը: Վերջինս այժմ պէտք է օրհնի հաղորդութիւնը եւ ցոյց տայ միաբանութեանը:

Իւրաքանչիւրը վառեց այն բազմաթիւ մոմերը, որոնք նախապէս փողի դիմաց տալիս էին ամբողջ եկեղեցում: Երկուսը վառեցին միանգամից, այնքան արագ, որքան արարողութիւնն էր առաջ ընթանում: Ամենամեծ մոմը, որ գտնուում էր խորանի առջեւ եւ մօտաւորապէս վեց մատնաշափ շրջագիծ ունէր, վառեցին զգացմունքով, երբ հաղորդութիւնն էր օրհնում: Քահանաները երգում էին, եւ միաբանութիւնը ծայնակցում էր, մինչեւ որ արարողութիւնն աւարտուեց: Երկու կողմի քահանաներն ունէին ափսէներ՝ ամրացուած մի երկար գաւազանի, որոնք նրանք զրնգացնում էին, երբ պատարագի հերթական մասն էր կատարում, նաեւ՝ երբ բուրվառակիւր քահանան կատարում էր իր պարտականութիւնը՝ յաճախ ճօճելով եւ տարածելով իր անուշահոտութիւնը խորանի եւ երգչախմբի կողմը: Վարագոյրը մինչեւ վերջ բացուեց, որը նշանակում էր, որ ամէն ինչ վերջացաւ, եւ բոլորը պիտի տուն գնան: Հիմնական խորանի երկու կողմում կային մէկական փոքր խորան, որոնց վրայ ոչ մի արարողութիւն չկատարուեց, սակայն եկեղեցուց դուրս գտնուող գեղեցիկ մատուոտում ուրիշ քահանաներ պատարագ էին մատուցում նրանց համար, որոնց համար տեղ չէր եղել եկեղեցում²⁰:

Ամսի 15ին, Չատկուայ օրը, հայերի եւ յոյների տօնը սկսուեց: Ուշագրաւ է, թէ ինչ եղանակով էին վերջինները կատարում այդ տօնը, քանի որ այն վկայում է, թէ որքան է այս ժողովուրդը պահում նախկինում ունեցած իր հակումը դէպի սանձարձակ գութարճութիւնները՝ տօների ժամանակ... Նրանք ազատ են՝ իրենց տներում եւ փողոցներում հարբելու, կռուելու, պարելու եւ անելու ամէնը, ինչ որ իրենց սիրտն է փափագում... [Ի տարբերութիւն յոյների] հայերն աւելի հանդարտ եւ իմաստուն ժողովուրդ են եւ իրենց տօները չեն նշում այսպիսի ծայրայեղութիւններով: Եւ երբեք չտեսայ նրանց պարելիս, հարբելիս կամ փողոցում աղմկելիս, սակայն եթէ նրանք ցանկանում են գութարճանալ՝ գնում են որեւէ տուն կամ խան, որտեղ հայ սպասաւորները հաւաքում են եւ վայելում անմեղ գութարճանքներ, կամ որեւէ խումբ հեծելավարում է, որը նրանց հաճոյք է պատճառում եւ գոյց է տալիս, որ նրանք իրենց նախնիներից ժառանգել են լաւ հեծելավարութեան արուեստը²¹:

Մենք չենք ակնկալում թուրքական ճարտարապետութեան մէջ գտնել հետքերն այն փառահեղութեան, որ տակաւին երեւում են հին եգիպտացիների, յոյների կամ արաբների մօտ: Թուրքը չգիտի, թէ ինչպէս է պետք քարը յարմար կերպով գետեղել. շատ աւելի քիչ է նրա՝ պատ չինելու կարողութիւնը: Հայերն են նրանց ճարտարապետները: Սրանք բնական հակում ունեն դէպի այս արուեստը: Եւ օժտուած այն բոլորով, ինչ որ տեսել են Արեւելքում իրենց ուղեւորութիւնների ընթացքում՝ կառուցում են այնքան լաւ, որքան որ կարելի է ակնկալել մի ժողովրդից, որն իր ողջ իմացութեան համար կարծես թէ պարտական է բնութեանը: Եթէ այս ժողովուրդը կարողանայ Երուսաղիմում եւ այնտեղ զարգացնել իր կարողութիւնները, մենք գուցէ Արեւմուտքում ունենանք բոլոր օգտակար կառոյցների մէջ վարպետներ, որոնք հաւանաբար մրցեն հների հետ եւ անցնեն նորերից շատերին²²:

Այդ տեղը (Հայֆան - Ա.Բ.) մի քանի տարի առաջ հիմնկուսանից շատ անելի վատ վիճակում էր, սակայն մի կոստանդնուպոլսեցի հայ²³, ինձ անյայտ պատճառներով, իրաւունք ստացաւ բարելաւել շինութիւնները, որը նա կատարեց՝ վերաշինելով նաւակայանը եւ ամփին կանգնեցնելով մի քանի քարէ կառոյց ու շտեմարան՝ շատ անելի նախընտրելի այն ողորմելի պատկերից, որ եղել է նախկինում: Քաղաքի միւս տները խղճով խրճիթներ են, որտեղ բնակւում են մեծ մասամբ բուրքեր եւ արաբներ՝ որոշ յոյների եւ հայերի հետ միասին, վերջիններիս վանականներն այստեղ իջեւանատներ ունեն ուխտաւորներին ընդունելու համար²⁴:

[Երուսաղէմում] այն տեղը, որտեղ նախկինում կանգնած է եղել [քահանայապետ] Աննայի պալատը եւ որտեղ Քրիստոսին տանջել են, պատկանում է հայերին, որոնք մի փոքր եկեղեցի ունեն այնտեղ²⁵: ...Մէկ այլ հայկական եկեղեցի կառուցուել է այն տեղում, որտեղ, ասում են, Քրիստոսին հարցաքննել է Կայափասը, առաջինից ոչ շատ հեռու, սակայն քաղաքի դարպասներից դուրս²⁶: Երկու եկեղեցիներում էլ կայ գեղեցիկ զարդարուած առանձին փոքր սենեակ՝ ճիշտ այդ դէպքի կատարման վայրի վրայ եւ հարցաքննութեան տեսարանի պատկերով հանդերձ:

Ամսի 9ի առաւօտեան ես այցելեցի հայերի պատրիարքին²⁷, որի հետ ծանօթացել էի Չմիւռնիայում²⁸: Նա նստում է այդ ժողովրդի վանքում, որն ամենամեծն է Երուսաղէմում, անելի մեծ, քան լատիններինը, եւ հարուստը՝ նրանցից յետոյ²⁹: Վանականների սենեակներից բացի նա ունի նաեւ հազարից անելի սենեակ ուխտաւորների համար: Հարուստ հայ ժողովուրդը, որն Արեւելքի բոլոր ժողովուրդներից ամենից շատ է հակուած դէպի աստուածավախութիւնը, եթէ ոչ սնահաւատութիւնը, ուխտագնացութիւնների միջոցով Երուսաղէմում իրենց այս հոգեւոր բնակութիւնն այնքան պատուաւոր դիրքի է հասել: Տարի չի անցնում, որ հազարից անելի [հայ] ուխտաւորներ այստեղ չգան Հայաստանից, Պարսկաստանից եւ Թուրքիայից, որոնք Երուսաղէմից չեն հեռանում՝ առանց նշանակալից նուիրատուութիւն կատարելու: Վանքում նրանց ունեցած մատուոր Երուսաղէմում եղած անկախ մատուռների մէջ ամենագեղեցիկն է: Այն ամբողջովին զարդարուած է շքեղ վարագոյրներով, գեղեցիկ նկարներով եւ անթիւ քանակութեամբ արծաթէ ջահերով, մի մասը ոսկէգօծուած եւ գրեթէ բոլորն էլ պատրաստուած ակնառու վարպետների ձեռքով³⁰:

[Նկարագրում է Երուսաղէմի մի յունական եկեղեցի, որին] «կցուած էր մի սրահ, որի մի մասը պատկանում էր հայերին, բաղկացած մի տարածքից, որ պարունակում էր եօթ սիւն՝ իրենց եկեղեցու համար»³¹:

[Ծննդեան տօներին նախկուպոսից սուրբ կրակը վերցնելու արարողութեան առթիւ] Որոշ հարուստ վաճառականներ, որոնց մեծ մասը հայեր կամ ասորիներ (քանի որ յոյները մեծ մասամբ աղքատ են) իրենց առաջարկում են այդ նպատակի համար: Երեք տարի առաջ մի պարսկաստանցի հայ առաջին կրակի համար 30 հազար ցելսին³² վճարեց, մի գումար, որ երբեւէ չի վճարուել դելփեան պատգամաբերի պատասխանի համար³³:

...Ամսի 18ին, երբ ես պիտի հրաժեշտ տայի հայոց պատրիարքին, նա ինձ առաջարկեց ուղեկցել իր վանքում գտնուող Սուրբ Յակոբեան եկեղեցին՝ տեսնելու համար նրա սպասքը: Դրանք տեսարժան են, լինելով ամենահարուստը եւ ամենաարժեքավորը, որով Արեւելքի ցանկացած եկեղեցի կարող է պարծենալ, ու թերեւս հաւասար է Երուսալի ամենամեծ եւ ամենահարուստ քրիստոնէական եկեղեցիների կարասիներին: ...Ոմանք մաքուր ոսկուց են, ոմանք՝ ոսկեջրած արծաթից, եւ զարդարուած են թանկարժէք քարերով: Բահանաների հանդերձանքն ամբողջովին կարուած է Հնդկաստանից բերուած ամենահրաշալի միւթերից, եւ նրանց մեծ մասը զարդարուած է թանկարժէք քարերով: Եկեղեցու բոլոր ջահերն արծաթից են, լաւ մշակուած եւ կանոնաւոր շարքով կախուած, եւ բաւական թանկ արժեն: Բոլոր այդ սպասքերէնն այդ օրը դրել էին մեծ սեղանին՝ Սուրբ Յակոբի օրն այն հասարակութեանն ի ցոյց դնելու համար: Լատինների կարասիները սքանչելի են եւ թերեւս աւելի լաւ ճաշակով են պատրաստուած, սակայն իրենք նոյնպէս խոստովանում են, որ հայերինն աւելի հարուստ է³⁴:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Fredrick Hasselquist, *Iter Palaestinum Eller Resa Til Helige Landet, Förrättad Ifrån år 1749 Til 1752, Med Beskrifningar, Rön, Anmärkningar, öfver De Märkvärdigaste Naturalier*, ed. by C. Linnæus, Stockholm: Trykt på L. Salvii kåastnad, 1757: Սոյն գրքի լուսատիպ հրատարակութիւնը տպագրուել է Ստոկհոլմում, 1969ին:
- ² Նրանց մասին տես մեր՝ Հայաստան-Սկանդինավիա. Պատմամշակութային Առնչութիւններ գրքում, Երեւան, 2003, էջ 67-71:
- ³ Հասելքուիսից յետոյ շուէդներից Երուսաղէմ այցելել է Լարս Քիւմբլինը, որը 1770ին Ստոկհոլմում հրատարակել է Պաղեստինի Կամ Յուդայի Երկրի Աշխարհագրական Նկարագրութիւնը շուէդերէն գիրքը:
- ⁴ Fredrick Hasselquist, *Voyages And Travels In the Levant In The Years 1749, 50, 51, 52, Containing Observations In Natural History, Physics, Agriculture, And Commerce; Particularly On The Holy Land, And The Natural History Of The Scriptures*, ed. by Charles Linnæus, London: Printed for L. Davis and C. Reymers, 1766, էջ 11: Ուփսալայի Համալսարանի գրադարանում մենք ծանօթացանք նաեւ այս անգլերէն թարգմանութեան ձեռագրին, որ պահուած է Հասելքուիսի ֆոնդում (թիւ X:392a): Սոյն թարգմանութիւնը որոշ չափով ծանօթ է եղել հայ բանասէրներին եւ պատմաբաններին, արտացոլուել Արմենակ Սալմասեանի Հայկական Մատենագիտութիւն հատորի մէջ (Երեւան, 1969, էջ 251):
- ⁵ Տեղեկութիւններ չկան, որ Հասելքուիսը տիրապետած լինի հայերէնին, սակայն դա բացառուած չէ: Նրա յիշատակագրքում իր հայ ծանօթը մակագրութիւն է բողել հայերէն, նա հինգ ամիս ապրել է հայերով բնակեցուած Չմիւռնիայում, ուստի եւ միանգամայն հմարաւոր է, որ նա որոշ չափով ծանօթ եղած լինէր հայերէնին: Այդ ժամանակաշրջանում Չմիւռնիայում եղել է շուէդական հիւպատոսարան, որի գլխաւոր հիւպատոս Անդրէաս Ռիդելիուսը (Rydellius) օժանդակել է Հասելքուիսին (տես՝ Hasselquist, *Voyages*, էջ IV): Չմիւռնիայում եղած ժամանակ շուէդ ճանապարհորդը թերեւս առիթ ունեցած լինի ծանօթանալ տեղի շուէդական հիւպատոսարանի առաջին թարգման հայագի Ժան Մուրաջայի (Յովհաննէս Մուրատ-

ճայեան, 1721-1787) հետ: Վերջինս եղել է շուէական ականաւոր դիւանագէտ եւ պատմաբան Իզմատիու Մուրաջա դ'Օստոնի հայրը եւ շուէական դիւանագէտ եւ արեւելագէտ Աբրահամ Կոնստանտին դ'Օստոնի մեծ հայրը: Ժամ Մուրաջան էլ կարող էր Հասելքուիսին որոշ չափով հայերէն սովորեցնել: Չի բացառուում նաեւ, որ Հասելքուիսին առիթ ունեցած լինէր ծանօթանալ 1721ից մինչեւ մահը Պոլսի շուէական հիւպատոսարանում որպէս բարգման պաշտօնավարած ականաւոր բարգմանիչ Յակոբ Ճամճիօղլուի (1695-1775) հետ:

⁶ Միջնադարում աստուածաշնչեան երկիրը շատ եւրոպացի ճանապարհորդների է գրաւել, որոնք յետագայում հրատարակել են ուղեգրութիւններ եւ ճանաչողական գրքեր: Դրանցից յատկապէս արժէքաւոր են Hadrianus Relandus, *Palaestina* լատիներէն երկհատոր աշխատութիւնը (հրատարակուած 1714ին), օծտուած մի շարք քարտէզներով եւ ֆրանցիսկեան քահանայի հեղինակած *Lamentavel Relacão* պորտուգալերէն գրքոյկը (Լիսաբոն, 1756), որտեղ նկարագրուած է Երուսաղէմում բնակուող արաբների ճնշումը տեղի քրիստոնեաների հանդէպ:

⁷ Հասելքուիսը միակը չի եղել Լիմէյի ուսանողների մէջ, որ չի վերադարձել գիտական ճանապարհորդութիւնից: Իրենց մահկանացուն օտարութեան մէջ են կնքել նաեւ Լիմէյի ուսանողներ, երիտասարդ բուսաբաններ Օսթէկը եւ Լօէֆլինգը, որոնք ճանապարհորդութեան են մեկնել Հասելքուիսից մէկ տարի անց՝ 1750ին (առաջինը՝ Չինաստան, երկրորդը՝ Իսպանիա, ապա՝ Հարաւային Ամերիկա): Ի դէպ, Վենեսուելայում վախճանուած 25ամեայ Պետրուս Լօէֆլինգի (Petrus Loeffling, 1729-1756) ճամփորդական նոթերը եւս յետմահու, 1758ին հրատարակել է Լիմէյը (տես Yevgenij Grigorevich Bobrov, *Karl Liney*, Լենինգրադ, 1970, էջ 171, ռուսերէն): Ումտոյի Համալսարանի շրջակայ միջավայրի պատմութեան պրոֆեսոր Սվերքէր Սէօրլինը Լիմէյի մասին գրած իր ճանաչողական յօդուածում այսպէս է գնահատել շուէ գիտնականի երիտասարդ ճանապարհորդ ուսանողներին. «Այն գիտահետազոտական ծրագիրը եւ ժողովրդական տնտեսութեանը նպաստող նախագիծը, որ իրականացրել են Լիմէյը եւ նրա ճանապարհորդ առաքեալները՝ մեծ մասամբ 25ամեայ երիտասարդներ, եղել է ամէնից երկարաժամկէտ, հետեւողական ու անգիջում ծրագիրը Շուէիայում: 1746ին յաջորդած երեք տասնամեակի ընթացքում...մինչեւ 1770ը, Լիմէյի աշակերտները առաջատար էին ոչ միայն գիտական ճամփորդութիւնների մէջ, այլեւ բաւական մեծ բաժին ունէին նրա կատարած բոլոր հետազոտութիւնների մէջ: Լիմէյի հաւաքագրած ընդամէնը քսանամեայ երիտասարդներն իրենց լաւագոյն տարիները նուիրաբերում էին այն գաղափարին, որ իրենք ոչ միայն պէտք է գիտական սխրանք իրագործեն, այլեւ հնարաւորութիւն ունենան գոյատեւելու դժուարագոյն պայմաններում, ինչը յաճախ չափազանց բարդ խնդիր էր: Նրանցից մի քանիսը մահացել են, ոմանք կորցրել են ողջ ունեցուածքը եւ ձախողուել, իսկ առնուազն մէկը խեղաքարուել է: Լիմէյի հետաքրքրութիւնը տարէջտարի մարում էր, հաւանաբար այն պատճառով, որ չնայած գործադրուած ֆանքերին, արդիւնքը հազուադէպ էր համապատասխանում ծախսուած միջոցներին եւ մարդկային կորուստներին» (Sverker Sörlin, "Naturens hämnd på Linné," *Månads Journalen*, Ապրիլ, համար 4, 1999, էջ 59):

⁸ Տես՝ ծանօթ 4:

⁹ Hasselquist, *Voyages*, էջ 33:

¹⁰ Նոյն, էջ 165:

¹¹ Ուիսալայի Համալսարանի Գրադարան, Ձեռագրերի Բաժին, Ֆրեդրիք Հասելքուիսի արխիւ, վաւերագիր Y62:

¹² Hasselquist, *Voyages*, էջ 42:

¹³ Հասելքուիսթը պատարագին ներկայ է եղել Չմիտնիայի մեծագույն հայկական եկեղեցում՝ Ս. Ստեփանոսում (որը նախապես կոչուել է Ս. Թադեոս-Բարբուղիմեոս): Այս վանքի մասին մանրամասն տե՛ս՝ Յակոբ վ. Քոստան, *Հայր Ի Չմիտնիա Եւ Շրջակայս*, հ. Ա., Վիեննա, 1899, էջ 45-77: Այժմ վանքը գործածում են որպես պահեստ (տե՛ս՝ *Հայրենիքի Չայն*, Երևան, 7.11.1990):

¹⁴ Հասելքուիսթի վկայությունը, որ ուսնուայի արարողությունը կատարող քահանան նստած է եղել գորգի վրայ, անսովոր է բուն: Թերեւս պետք է լինի «ծնկի էր եկած»:

¹⁵ Hasselquist, *Voyages*, էջ 45-46:

¹⁶ Ակնարկում երիտասարդները կարող էին լինել ինչպես դպիրներ կամ մոմքեր, այնպես էլ աշխարհիկ մարդիկ, որոնք կարդացել են Դանիելի մարգարեությունից՝ Շրագալոյցի պատարագին ընթերցող հատուածները:

¹⁷ Հասելքուիսթի հաղորդած տեղեկությունը՝ հայ եկեղեցում երաժշտական գործիքների գործածության վերաբերեալ՝ արժանի է ուշադրության, քանի որ ցարդ յայտնի էր, որ հայ եկեղեցում գործիքային երաժշտություն սկսել են օգտագործել ԺԹ. դարից: Սակայն երաժշտական գործիքների հարցը մնում է չպարզում: Սոյն հատուածում ակնյայտ շփոթություն է առկայ. իրականում միմեանց բախտող երկու հաստ արոյրէթքերն են նման ծնծղանների, այլ ոչ երկաթեայ սրինգները, իսկ այդ ծնծղաններն էլ պիտի որ լինեն ոչ թէ երաժշտական գործիք, այլ հայոց պատարագի ժամանակ օգտագործուող բշոցը, որը հեղինակը եւս մէկ անգամ յիշատակել է այս նոյն հատուածում՝ որպէս երկար գաւազանին ամրացում ափսէներ:

¹⁸ Այն, որ հայկական պատարագի մէջ երոպացին լսել է բուրբական երաժշտություն՝ չպետք է տարօրինակ բուայ: Կոմիտասի վկայութեամբ՝ Օսմանեան կայսրութեան քաղաքների հայկական եկեղեցիներում հայ հոգեւոր երաժշտութեան մէջ մեծապես մուտք էին գործել բուրբական երաժշտութեան տարրեր. «Պատարագի երգերն գրեթէ անխտիր օտարամուտ եւ անճաշակ եղանակներ են. Տաճկաստանում տաճիկ-արարյոյն, Պարսկաստանում՝ պարսիկ-արար...» (Կոմիտաս, *Նամակներ*, Երևան, 2000, էջ 61): Համեմատութեան համար արժէ մէջբերել Հասելքուիսթից մի քանի տասնամեակ անց Էջմիածնում հայ հոգեւոր երաժշտություն ունկնդրած մէկ այլ երոպացի ճանապարհորդի կարծիքը, որն ապացուցում է, թէ բուն հայ միջավայրում հայ հոգեւոր երաժշտությունը համեմատաբար անխաբար է մնացել. «Քահանաները Հագնում են սպիտակ շապիկ եւ արեւածագին սկսում են լսուել նրանց ուսմկական մեղեդիները. Եթէ Իտալիայի կախարդիչ մեղեդիները չունեն, յամենայն դէպս նրանց չափ վեհ ու յուզիչ են: Մի երոպացի առանց յուզմունքի չի կարող չլսել նրանց. լինի դա հոգու խորքը թափանցող պարզութեան պատճառով կամ իր Հայրենիքը յիշելուն Համար եւ կամ մանկութեան առաջին տպաւորութիւնների վերապրումի հետեւանքով, քաղցր եւ ուժեղ տպաւորութիւններ, մանաւանդ հեռու երկրներում» («Ուղեգրություններ Պիէր Ամէդէ Ժոքերի (1805-1806)», Յովհաննէս Յակոբեան, *Աղբիւրներ Հայաստանի Եւ Անդրկովկասի Պատմութեան. Ուղեգրություններ*, հ. 2, Երևան, Պետհրատ, 1934, էջ 203):

¹⁹ Բացառում է, որ կուսակրօն քահանան կրէր եպիսկոպոսական բագ: Ամենայն հաւանականութեամբ Հասելքուիսթը չի հասկացել, որ տեսել է հենց եպիսկոպոսին եւ կամ քահանայի գլխի խոյրն է սխալմամբ անուանել եպիսկոպոսական բագ:

²⁰ Հասելքուիսթից առաջ Չմիտնիայի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցու վերաբերեալ շուրջ ճանապարհորդ Միքայէլ Էմենանը գրել է հետեւեալը. «Նրանք այստեղ

կառուցել են մի մեծ եւ գեղեցիկ եկեղեցի եւ բարեխաւի են այն մեծ Հրդեհից յետոյ (իրականում այս եկեղեցին վերակառուցուել է 1689ին՝ 1688ի երկրաշարժի աւերածութիւնից յետոյ - Ա.Բ.), դրա յատակը ծածկուած է փոքրիկ գեղեցիկ թուրքական գորգիկներով, այն նայատակով, որ Հայերը, թուրքական սովորութեան համաձայն, կօշիկներ են հետներն աւնում եւ դրանցով մտնում իրենց եկեղեցին, իրենց պաշտում են թուրքերի նման, այնպէս որ շուտով գնալով աւելի կը նմանուէին թուրքերին, եթէ եկեղեցում չունենային խորան եւ պատկերներ: Եկեղեցին կրում է սուրբ Ստեփանոսի անունը, որի պատերին նկարներ են կախուած՝ խորանից վեր կամ աջ: Եկեղեցու դռան վերեւում նոյնպէս սուրբ Ստեփանոսի եւ Երրորդութեան պատկերներն են: Առաջինը Հօր նկարն է՝ ծերունու տեսքով եւ եռածայր պապական թագով, Որդին՝ խաչով եւ Սուրբ Հոգին՝ աղանու տեսքով: Ինչ վերաբերում է եկեղեցական արարողութեանը, այն իրականացում է լիակատար ազատութեամբ: Նրանք այստեղ ունեն ութ քահանայ, որոնցից ամենատարէցը լուծում է նրանց մէջ հնարաւոր տարաձայնութիւններն ու վէճերը: Նրանք առաջնորդում են թուրքական օրէնքներով, միայն թէ, իմ կարծիքով, նրանք դրան քիչ են դիմում իրենց Հարցերով: ...Աստուծոյ խօսքը, գրքերը, որոնցով նրանք կատարում են պատարագը, տպագրուած են վենետիկում եւ Մարսէլյում եւ այլ պապական վայրերում: Այդպիսով կարելի է մտածել (եւ ես ինքս էլ նկատել եմ), թէ որքան սերտ են նրանք կապուած այդ կաթողիկոսներին: Ամենատարէց քահանայի անունն իսահակ է, միջին տարիքի մի մարդ, խաղաղ, պարզ, միամիտ եւ կենսուրախ, այդպէս միւսներն էլ մօտեցան ինձ, առնուազն իմ հանդէպ ամենայն սիրալիրութիւն ցուցաբերեցին, ինչպէս եկեղեցում, այնպէս էլ տանը» (տե՛ս՝ Michael Eneman, *Resa i Orienten 1711-1712, Utgivnen af K. U. Nylander: Förra Delen, Mindre Asien Och Egyptien. Senare Delen, Sinai Halfön Och Palestina*, Ուփսալա, 1880, էջ 43-45):

²¹ Hasselquist, *Voyages*, էջ 46-51:

²² Նոյն, էջ 101: Այս հատուածն արեւմտահայերէն բարգմանութեամբ մէջ է բերուած՝ Արշակ Ալպոյանեանի, *Արաբական Միացեալ Հանրապետութեան Եպիսկոպոսի Նահանգը Եւ Հայերը* գրքում, Գահիրէ, տպարան «Նոր Աստղ», 1960, էջ 50-51:

²³ Նկատի ունի հոգևոր եւ հասարակական եռանդուն գործիչ, 1715-1749ին Երուսաղէմի Հայոց պատրիարք Գրիգոր Չ. Շիրուանցուն (Շիրայակիր, 1670-1749), որը կառուցողական մեծ գործունէութիւն է իրականացրել Երուսաղէմում եւ շրջակայ բնակավայրերում:

²⁴ Hasselquist, *Voyages*, էջ 118:

²⁵ Նկատի ունի Երուսաղէմի հայկական Ս. Հրեշտակապետաց վանքը, որը գտնում է քաղաքի հարաւային կողմում՝ պարսպի մօտ եւ հայոց բաղային եկեղեցին է:

²⁶ Հաւանաբար նկատի ունի Երուսաղէմի հայոց Ս. Փրկչի վանքը:

²⁷ Հասնըրուիսի՝ Երուսաղէմ այցելած տարին Հայոց պատրիարքը եղել է ականատր հոգևոր-մշակութային գործիչ, գրող Յակոբ Բ. Նալեան Չմմառացին (1701-1764), որը Երուսաղէմում գործել է 1749-1752ին, այնուհետեւ դարձել Պոլսի պատրիարք:

²⁸ Այդ ծանօթութեան մասին Հասնըրուիսը վկայել է 1749ի Դեկտեմբերի 16ին Չմիւռնիայից Լիմէյին գրած նամակում. «Ես նաեւ յսել եմ, որ այստեղ կարճ ժամանակում լաւ հնարաւորութիւն կը լինի Հայոց պատրիարքի ընկերակցութեամբ մեկնել Երուսաղէմ, որը ներկայումս այստեղ է» (Hasselquist, *Voyages*, էջ 407-408):

²⁹ Նկատի ունի Երուսաղեմի գլխավոր՝ Ս. Յակոբի վանքը, որը գտնվում է Սիոն լեռան գագաթին: Հասելը Երուսաղեմի ալյուրալից հայկական վայրերը (ու մաե հայոց պատրիարքին տուած ալյուրալից) մշտապէս կրկնել են Երուսաղեմ ճանապարհորդած երուսաղեմիները: Յիշենք մէկ օրինակ. Հասելը Երուսաղեմի մի քանի տասնամեակ անց ֆրանսիացի նշանավոր գրող Շատոբրիանը «Ռիստագնացութիւն Փարիզից Երուսաղեմ» գրութեամբ կատարել է հետեւեալ նշումները. «Աննայի տունը, որը գտնւում է Դաւթի դարպասների մօտ, Սիոն լեռան ստորոտը, այս տան աւերակների վրայ հիմա կառուցուած է մի եկեղեցի, որը պատկանում է հայերին: ...Սուրբ Յակոբ Մեծի նահատակութեան վայրը, որն այժմ հայկական վանք է՝ իր շքեղ ու հարուստ եկեղեցով: Հիմա գնում եմ հայկական պատրիարքին հանդիպելու» (Շատոբրիան, «Ռիստագնացութիւն Փարիզից Երուսաղեմ», ֆրանս. բարձմանց Ռուբեն Խաչատրեանը, *Լուսաւորիկ*, 6.01.1993):

³⁰ Hasselquist, *Voyages*, էջ 123-124:

³¹ Նոյն, էջ 135:

³² Յեխին (անգլերէն՝ sequin), ոսկեղրամ, շրջանառութեան մէջ է եղել Իտալիայում եւ Օսմանեան կայսրութիւնում:

³³ Hasselquist, *Voyages*, էջ 138:

³⁴ Նոյն, էջ 139-140:

THE SWEDISH TRAVELLER FREDRICK HASSELQUIST ABOUT THE ARMENIANS (Summary)

ARTSVI BAKHCHINIAN

There are interesting observations and information about the Armenians in the traveling notes of the Swedish botanist and physician Frederick Hasselquist (1722-1752), *Iter Palaestinum*. He traveled in Ottoman Turkey, Palestine, and Egypt and described the peoples of these countries, including Armenians. He attended an Armenian church service in Smyrna and gave some information about the Armenians in Jerusalem and Jaffa.

Hasselquist appreciated the skills of the Armenians: "The Armenians are the architects of the Turks. By their natural inclination for the arts, assisted by what they have seen on their travels in the East, build as well as can be expected from a people who owe all their knowledge, in a manner, to nature. If these people were to travel to Europe, and there cultivate their parts, we might see in the East masters in every useful science, who might probably vie with the ancients and surpass many of the moderns."